# 19-ԱՄՅԱ ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԵՄՊԻՈՆ

## *17-ԱՄՅԱ ԼԵՎՈՆ ԱՐՈՆՅԱՆԸ ՓՈԽՉԵՄՊԻՈՆ ԵՎ ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐ*

Հայաստանի տղամարդկանց շախմատի առաջնությունը, որի վերջնագիծը հատեց երեկ ուշ երեկոյան, անակնկալ ելք ունեցավ: Այն ավարտվեց մատաղ սերնդի ներկայացուցիչների փայլուն հաջողությամբ: Առավելագույն 7,5-ական միավոր վաստակեցին «նոկաուտ» համակարգով Լաս Վեգասի աշխարհի առաջնության մեր պատանի երկու մասնակիցները՝ գրոսմայստեր Կարեն Ասրյանը եւ միջազգային վարպետ Լեւոն Արոնյանը: Լրացուցիչ ցուցանիշներով չեմպիոնի կոչումն առաջին անգամ նվաճեց Կարեն Ասրյանը, որը բոլորովին վերջերս Երեւանում դարձել էր մինչեւ 20 տարեկան շախմատիստների աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր: Հաշվի առնելով Հայաստանի առաջնության ուժեղ կազմը, դա մեծ հաջողություն է Կարեն Ասրյանի համար:

Առաջին անգամ փոխչեմպիոնի կոչմանն արժանացավ Լեւոն Արոնյանը, որը նաեւ երրորդ անգամ լրացնելով գրոսմայստերի նորման դարձավ Հայաստանի ամենակրտսեր գրոսմայստերը:

«Ֆուտբոլ +»-ն ի սրտե շնորհավորում է տաղանդավոր պատանի երկու շախմատիստներին հիանալի հաջողության համար:

Երրորդ մրցանակակիր դարձավ բազմափորձ գրոսմայստեր, Հայաստանի նախկին չեմպիոն Արտաշես Մինասյանը, որը վաստակեց 7 միավոր:



Լուսանկարը՝ ԱՇՈՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

**Կարեն Ասրյան**

Վերջին տուրում գրանցվեցին հետեւյալ արդյունքները. Ասրյան-Արա Մինասյան՝ 1-0, Արոնյան-Լպուտյան՝ 0.5-0.5, Արտաշես Մինասյան-Նադանյան՝ 1-0, Մատիկոզյան-Խաչիյան՝ 0.5-0.5, Եղիազարյան-Սարգսյան՝ 1-0, Վարուժան Հակոբյան-Նալբանդյան՝ 1-0: